Վեցերորդ թողարկում

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի վեցերորդ թողարկման հիմնական պայմանները.	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	40 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	1 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 8.5%, որը կհաշվարկվի սկսած տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող օրվանից
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	23/05/13թ.-13/06/13թ.

Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 17/05/2013թ.:

Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 23/05/13թ. մինչև 13/06/13թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ 14/06/13թ.-ից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում՝ մասնավորապես "ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ" ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:

Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել "Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա" ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ –ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում:
Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարը, այլ նաև կուտակված տոկոսները:

"Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին" ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են "Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի" կողմից:

Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 14.06.2016թ.:

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի վեցերորդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.

- Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում - 14.09.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում - 14.12.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում - 14.03.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում - 14.06.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում - 14.09.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում - 14.12.2014թ
- Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում - 14.03.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում- 14.06.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում - 14.09.2015թ
- Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում - 14.12.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում - 14.03.2016թ.
- Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում – 14.06.2016թ.

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ “Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման ազդագրում, որը 17.05.13թ.-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: